ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«18» մայիսի 2026թ. N 116-Ա

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/7 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 27-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնումները համակարգողի (հանձնաժողովի քարտուղարի) 2026 թվականի մայիսի 15-ի N Ն/16.4/5210-2026 զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործունեությունը կասեցնել մինչև ս.թ. մայիսի 22-ը:
2. Իրավաբական վարչության պետին՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 27-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն մինչև ս.թ. մայիսի 22-ը ժամը 16:00 ներառյալ, զեկուցագրում բարձրացված հարցադրման իրավաչափության վերաբերյալ տալ իրավական եզրակացություն:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում վերջինիս ընդունման մասին այն անձանց օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, ում ուղղված է հրամանը:

Ստորագրող
ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
4103890509

2026-05-18 14:08:08 GMT+4
Հավաստված է EKENG-ի կողմից

Վարդան ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» մայիսի 2026թ. N 126-Ա

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N 116-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 27-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի 2026 թվականի մայիսի 18-ի «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործունեությունը կասեցնելու մասին» N 116-Ա հրամանով գնահատող հանձնաժողովի գործունեության կասեցման ժամկետը երկարացնել մինչև ՀՀ վարչապետի աշխատակազմից դիրքորոշում ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում վերջինիս ընդունման մասին այն անձանց օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, ում ուղղված է հրամանը:

Ստորագրող
ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
4103890509

2026-05-22 10:35:00 GMT+4
Հավաստված է EKENG-ի կողմից

Վարդան ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ